№ 19 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15 **1896** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15 № 19

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԵԼԵՖՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և ազն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառի 2 կոպէկ.
ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄԷ

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ., ամսական 1 բուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համապատասխան գործ է պահանջվում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Օրէցօր· Պաշտօնական կարգադրութիւն· Նամակ Հին-Նախիջևանից· Նամակ Ղազարից· Նամակ Ղուբայից· Նամակ Խմբագրութեան· Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Վերջին տեղեկութիւններ· Աբիսինիա և Իտալիա· Նամակ Թիւրքիայից· Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ·—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ·—ԲՕՐՍԱ·—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Ազգի պատասանը։

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾ Է ՊԱՀԱՆՋՎՈՒՄ

—

Մի քանի օր առաջ Թիֆլիսում՝ զանազան համալսարանների և բարձրագոյն ղեկավարների նախկին ուսանողները ժողովված էին միասին ժամանակ անցկացնելու։ Փառաւոր ճաշի ժամանակ խօսեցին ճառեր դաստիարների յաղթութեան, լուսաւորութեան տարածման, գիտութեան զարգացման մասին և այլն, և այլն։

Այդ բոլորը շատ գեղեցիկ է և յիշեցնում է ուսանողութեան ժամանակները, երիտասարդական բուռն ոգևորութեան օրերը։ Սակայն կայ մի հանգամանք, որը մեր հասարակական ներկայ վիճակի մէջ ստիպում է մտածել և երկար մտածել։

Այդ նախկին ուսանողների մեծ մասը վաղուց վերջացրել է իր ուսումը և տարիներ շարունակ գտնվում է կեանքի զանազան ասպարէզներում։ Հարց է ծագում։ արդեօք նրանք իրագործում են այն իդէալները, որոնց մասին այնքան ոգևորութեամբ խօսում էին ուսանող ժամանակ և որոնց մասին նրանք յիշում են այսօր։ Արդեօք նրանք ջանք են գործ դրել մաքառելու այն բոլորի դէմ, ինչ որ անարդար է և խաւար։ Արդեօք նրանք ջանք են արել միանալու այն տարրերի հետ, որոնք հարթում են ազնիւ և խելացի կեանքի ճանապարհը։ Արդե՞օք նրանք գործնական կեանքում մերկացրել են խարդախութիւնը, ապտակել են քսութիւնը, պաշտպանել են ազնիւ և արդար գործը։ Անկասկած, կան մի երկու, երեք բացառութիւններ, բայց միթէ բացառութիւնները կարող են մեզ սփոփել, քանի որ մեր խաւար կեանքը պահանջում է հարիւրաւոր, հազարաւոր անկեղծ, ազնիւ, իդէալներով ոգևորվող անձնուէր գործողներ։

Գեղեցիկ ճառեր արտասանողները ուսանողներ չեն այժմ, այլ նախկին ուսանողներ։ Երբ ուսանողը ոգևորված խօսում է իդէալների մասին և երդումներ է անում ապագայի վերաբերութեամբ, նա դատապարտելի չէ։ զուցէ նա ապագայում և չէ կարողանալու հաստատ և հաւատարիմ մնալ իր տենչանքներին, բայց յամենայն դէպս նա դեռ մաքուր է, դեռ մեղքեր չէ գործել, չէ դաւաճանել իր „ճառերին"... Իսկ երբ ժողովվում են կեանքի մարդիկ, արդէն հասարակական կեանքի մէջ մի որ և է դիրք բռնած անձինք, նրանց վրա մեծ պատասխանատուութիւն կայ՝ զգոյշ լինել ֆրազներ արտասանելուց և լաւ դիտենալ, որ ունկնդիր հասարակութիւնը հաշիւ է պահանջում գեղեցիկ բառեր արտասանողից, և հիասթափվում է, որ այդ գեղեցիկ խօսքերը մնում են լոկ խօսքեր։

Ազնիւ, անձնուէր, անկաշառ գործունէութեան մասին թող խօսեն անդադար, բայց խօսեն համոզված՝ հաւատարիմ ուսանողական իդէալներին։ Եթէ ոչ այն, ինչ պէտք է ոգևորէր և դէպի գործունէութիւն մղէր, կարող է միայն հիասթափութիւն առաջ բերել։

Պէտք՞ է, վերջապէս, մի օր խօսքին համապատասխանի գործը և գեղեցիկ բառերը արձագանք լինեն գեղեցիկ գործունէութեան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԳԻ ՊԱՀԱՊԱՆԸ

(Գաւառական հերոսներ)

—

Առաջին տարտամ տպաւորութիւնները շուտով կուլ գնացին նրա մշտական հոգսերի մէջ։ Սրանք աւելի բարդվել էին, աւելի կսկծալի էին դառել։ Մի նոր հանգամանք, որ բերել էր Միքայէլը, բոլորովին ուրիշ, այրող լեզու էր տուել տան պակասութիւններին։ Եւ Մատեոսին մի քանի երեկոներ իր հանգստութեան տեղում, դրսի դռների մօտ, քննում էր իրան, խորհուրդ էր հարցնում իր մտքից՝ թէ ինչ պիտի անել։ Նա մոռանալ չէր կարող, որ իր հարսը գեղեցիկ է, շատ գեղեցիկ և—օհ, Տէր Աստուած, խօսք ու զրոյցով մարդու խելքն է տանում... Եւ չորս կողմում ինչեր կան։ Կիսատ պատը, հարևանի բարձր տունը, լաստերը... Հիմա որ չը պէտք է հանգիստ ու դադար ունենալ, հիմա որ պէտք է երկու աչք էլ փոխ առնել։ Մի անուն ունի Մատեոսին, մարդկանց մատի փաթաթանը կը դառնայ և այն ժամանակ, բարերար Տէր, գերեզմանի մէջ էլ չեն հանգստանայ նրա ոսկրները... Զգում է նա, որ մարդիկ արդէն խօսում են իր մասին. նրան կանչում էին կարևոր գործեր, որոնք գուցէ հարկադրէին նրան մի քանի ժամանակից յետոյ գնալ Ռուսաստան։ Կնոջը նա թողեց ծնողների մօտ, գաւառական խուլ անկիւնը մի քանի չարաթից յետոյ կը դառնար մի հիանալի ամարանոց, այդտեղ ամառը անց կը կացնէր Նինոն, ապա կը սպասէր իր ամուսնու վերադարձին Ռուսաստանից։

Միքայէլի հետ գնում էր և Նինոի մայրը։ Բաժանվելիս նա մի մեծ տեսարան սարքեց Մատեոսու դրանը։ Անթիւ անգամ իր ազգկայ ճառին ընկաւ, համբուրեց նրան, լաց եղաւ, ծիծաղեց և հարիւր ու հազար քաղցր խօսք ասաց։ Վերջը դարձաւ դէպի Մատեոսին.

—Խնամիջան, բացակայեցէք նա արտասվելով, —Նինոիս լաւ նայիր... Նինոիս չաքարահացով եմ պահել, աչքիս լոյսի պէս պահպանել եմ, այսպէս մեծացրել, այսպիսի սիրուն հրեշտակ չինել... Օրհնվի հոգիդ, խնամիջան, օտար է, զարիք է երեխաս... Ախ, հոգիջան... Սրտի ուղածն տրա, խնամի, հոգիդ լոյս դառնայ...

Նինոին նորից և նորից զրկելուց և համբուրելուց յետոյ նա գնաց դէպի Մատեոսին, տարածած իր թևերը, կարծես թէ պիտի խնամուն էլ զրկէր, անդադար կրկնում էր. «Հոգուդ մեռնեմ, խնամի»։ Մատեոսին յետ ու յետ քաշվեց, յուսահատական շարժուածքն արաւ և կարողացաւ ասել.

—Լաւ, լաւ, այդքան բաներ ջանելին չեն ասի. մարդկանց մի հաւաքիր գլխներիս։

Հրաժեշտի բոլոր էր։ Մատեոսին զրկեց իր որդուն, արտասուքը ծլաց նրա աչքերից։

—Ա՛խ, որդի, այս ինչ... մրմնջաց նա, որդու կրծքի վրա դնելով իր գլուխը, բայց չը վերջացրեց խօսքը, սրտի մէջ թաղեց այն կսկիծը, որ պիտի բառերով արտայայտէր։ Իսկ երբ որդին գնաց, հեռացաւ զոքանչի հետ և նա մնաց մենակ Նինոի և իր կնոջ մօտ, որոնք չարունակ լաց էին լինում, սարսափելի վիշտը աւելի ևս ծանրացաւ, սեղմեց նրա կսկիծը։ Նա դողալով առաջ մղվեց, կանգնեց տան դռների մօտ և նայեց հեռացող սայլակին. դարձեալ արտասուքը խեղդեց նրան, դարձեալ նրա սիրտը տակն ու վրա եղաւ և նրա բերանից դուրս թափվեցան տանջող սրտի մէջ այնպիսի դժուարութեամբ թաղցրած հրաշունչ բառերը։

—Այս ինչ բերիր իմ գլուխը, որդի, որդի՛...

Տօն օրվայ հանդիսաւոր ժամերգութիւնը վերջացաւ։ Մատեոսին ամենից առաջ դուրս եկաւ եկեղեցուց և կանգնեց հեռու մի տեղ, իր հարսին էր սպասում։

Նա թոյլ էր տալիս, որ հարսը ժամ գնայ, Աստուծու խօսքը լսէ։ Շատ հին ժամանակներից էր նա ընդդիմանում կնոջ տանից դուրս գալուն. վրդովեցուցիչ չէր միայն եկեղեցի գնալը, միայն թէ ճանապարհին կինամարտը պառէր իրան այն-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐԷՑՕՐ

VIII

Մեր մայրաքաղաքների լրագիրների ներկայացուցիչները,—եթէ հաւատանք Ռուսաց գործակալութեան հեռագիրներին,—արժանացան Բոլգարիայում և առհասարակ Բալկանի վրա՝ մեծ պատիւների, սիրալիր ընդունելութեան, ընդհանուր ուշադրութեան։ Նրանց ցոյցեր են անում, նրանց համար բանկէտներ են կազմում, հասարակական ճաշեր են տալիս, ունկնդրութեան են արժանանում Բոլգարիայի իշխանի կողմից, Սերբիայի թագաւորի կողմից, վերջապէս չքանչաներ, պարգևներ են ստանում, մի խօսքով՝ «օրվայ հերոսներ»...

Ուրախալի չէ մթթէ։ Անկասկած, շատ ուրախալի, քանի որ ազգային խօսքի ներկայացուցիչները այդպիսի պատիւների և ուշադրութեան են արժանանում մի այնպիսի երկրում, որը դեռ նոր ազատված թիւրքայ լծից և մահմէտական բռնապետութեան ճնշումներից, ոչ մի այժ, ոչ մի հեղինակութիւն չէր ճանաչում, բայց եթէ ֆիզիկական և բռնապետական այժը։

Հասկանալի է, ի հարկէ, որ ռուս ժուրնալիստներին ցոյց տուած արտասովոր յարգանքները մասամբ հետևանք են այն քաղաքական—բարեկամական չարժման, որ սկսվում է Բալկանի վրա՝ դէպի Ռուսաստանը. բայց հերքել չէ կարելի և այն փաստը, որ մամուլի ներկայացուցիչներին ցոյց տուած յարգանքները ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի հրապարակական խոստովանութիւն այն այժի, որը այժմ ներկայացնում է մամուլը, և այն յոյսերի, որ ամեն մի կրթված հասարակութիւն դնում է ազգային խօսքի վրա...

Պետերբուրգի և Մոսկվայի լրագիրների ներկայացուցիչները, որոնք Բոլգարիա գնացին՝ բարոյական պարտաւորութիւն ունեն միշտ յիշելու, որ այն պատիւները և պարգևները, որ իրանք ստացան՝ կրկնակի պարտք է դնում նրանց վրա՝ ազնուութեամբ և չիտակութեամբ ծառայելու այն մամուլին, որի անունով նրանք ներկայացան օտար երկրներում, օտար հասարակութիւններին։ Թագցնելու կարիք չը կայ, և անկարելի էլ է թագցնել, քանի որ այդ գիտէ իւրաքանչիւր ռուս ինտելիգենտ մարդ,—որ ռուսաց մամուլի չատ օրգանները ազգային խօսքը, գրականութիւնը դարձրել են մանր դիտաւորութիւնների, անձնական շահերի, և մինչև իսկ ճնասակար պրօպագանդայի միջոց, վայր գցելով այն սրբազան նշանակութիւնը, որ ունի ազգային խօսքը։

Առօրեայ կեանքի նեղ բօսլէների, առօրեայ գծուծ հաշիւների ազդեցութեան տակ, երբեմն էլ «դուր գալու» ցանկութիւնից դրդված՝ այդ մամուլը չատ անգամ, եթէ չասենք միշտ, դաւաճանում է իր կոչման և պարտականութեան. բայց լինում են դէպքեր, ոգևորութեան բօսլէներ, որոնք կարող են մաքրող, սթափեցնող ազդեցութիւն գործել այն գրողների վրա, որոնց գրիչը խրված է ցեխի և ազականութեան մէջ, դրդելով նրանց մոռանալ առօրեայ մանր հաշիւները, և նուիրվել այն ազնիւ գործունէութեան, որ իւրաքանչիւր գրողի միակ նպատակը պիտի լինի...

Բալկանի վրա ռուս ժուրնալիստներին ցոյց տուած հրապարակական ընդունելութիւնը մի յարգանք է ոչ թէ անձնաւորութիւններին, այլ նրանց կոչման, այն մամուլին, որի ներկայացուցիչները լինելու պատիւն ունէին նրանք. և դա բարոյական պարտք է դնում այդ ժուրնալիստների և ամեն մի գրողի, հրապարակախօսի վրա, ազնիւ, չիտակ և անձնուէր զինուոր լինել մամուլի համար, և միշտ մաքուր պահել իր զէնքը—գրիչը։

Թ. Մալումեան

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

—

Յունվարի 11-ին Բարձրագոյն հաստատված է այն կարգադրութիւնը, որի համաձայն պէտք է հրաւիրվեն զանազան ներկայացուցիչներ մասնակցելու և ներկայ գտնվելու առաջիկայ սրբազան թագադրութեան հանդիսին։

Բոլոր ներկայացուցիչները երկու դասակարգի են բաժանված. մի մասը պէտք է ներկայ գտնվի և մասնակցի նոյն իսկ Ուսպենսկի մայր-եկեղեցում, թագադրութեան և օծման հանդիսին, և մատուցանի իր շնորհաւորութիւնները Նոցա Կայսերական Մեծութիւններին, իսկ միւս մասը պէտք է ներկայ գտնվի և մասնակցի առհասարակ թագադրութեան արարողութեան և Կայսերական Մեծութիւնների հանդիսաւոր զբոսանքին։

Ուսալէնակի մայր եկեղեցում օծման հանդիսին մասնակցելու և Նոցա Կայսերական Մեծութիւններին շնորհաւորութիւններ մատուցանելու հրաւիրված անձանց թւում գտնվում են օտար դաւանութիւնների հետեւեալ ներկայացուցիչները. 1) Հռոմէական-կաթոլիկ դաւանութեան կողմից—Վարշավայի արքեպիսկոպոսը. 2) Հայ-լուսաւորչական եկեղեցու կողմից—ամենայն հայոց Կաթողիկոսը, կամ անձամբ, կամ ներկայացուցչի միջոցով, և Աստրախանի թեմական առաջնորդը. 3) Աւետարանական-լութէրական դաւանութեան կողմից—լութէրական ընդհանուր կոնսիստորիայի նախագահը և Մոսկվայի կոնսիստորիայի փոխնախագահը:

Թագադրութիւնից յետոյ Նոցա Կայսերական Մեծութիւններին շնորհաւորութիւններ պէտք է մատուցանեն. 1) մահմեդական դաւանութեան կողմից--Օրէնբուրգի, Տաւրիկեան նահանգի և Անդրկովկասի մուֆթիները, ինչպէս և Անդրկովկասի Շեյխ-ուլ-իսլամը. 2) կարիմ դաւանութեան կողմից—Եւպատորիայի գալամը իր երկու օգնականներով. 3) լամայական դաւանութեան կողմից—Արևելեան-Սիբիրի լամայական հոգևորականութեան բանդիդո-խամբան և կալմուկ ժողովրդի լաման:

Թագադրութեան հանդիսին ներկայ գտնվելու և մասնակցելու հրաւիրված են, առհասարակ, հետեւեալ դասակարգերի և հաստատութիւնների ներկայացուցիչները.—1) աղնուականութեան, 2) զեմստվոների. 3) քաղաքային ազգաբնակութեան, 4) գիւղական ազգաբնակութեան, 5) օտար դաւանութիւնների հոգևորականութեան, 6) կոզակների, 7) զինուորական կառավարութիւն ունեցող շրջանների և 8) Ֆինլանդիայի:

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Փետրվարի 4-ին

Ներկայ թուականին Նախիջևանումն էլ պէտք է մանի կրճատված քաղաքային ինքնավարութիւն: Այս առիթով տպագրած և կպցրած են պատերին այն անձանց անուանացուցակները, որոնք իրաւունք են ստանում մասնակցելու քաղաքային ընտրութիւններին: Ինչպէս լսում ենք, մինչև ապրիլ ամիսը կը կայանայ քաղաքային ձայնաւորների ընտրութիւնը և ապա վերջիններս կընտրեն քաղաքագլուխ և այլ պաշտօնեաներ: Ահա այս է պատճառը, որ մեր քաղաքը անսովոր կենդանութիւն է ստացել: Ամենքը ուրախութեամբ և լարված ուշադրութեամբ ըսպասում են ընտրութիւնների վախճանին և ամենքին զբաղեցնողը մի հարց է՝ թէ ով կընտրվի քաղաքագլուխ: Առ այժմ, որպէս քաղաքագլխի թեկնածուների, ժողովրդի մէջ խօսվում է Բաքու Մելիք-Բաբախանեանցի, որը այժմ քաղաքային դեպուտատ է, և Ջաֆար-Կուլի-խանի մասին: Սրանցից առաջինը ժողովրդականութիւն է վայելում և հաւանական կանդիդատն է համարվում քաղաքագլխի պաշտօնի համար:

Աչքի առաջ ունենալով մեր քաղաքի բարօրութիւնը, յուսով ենք, որ հայ և թուրք ազգաբնակութիւնները եղբայրաբար և օրինակելի համերաշխութեամբ կը գործեն այս ինդրում և առանց կրօնական և ազգային նեղ հայեացքների կընտրեն արժանաւոր մարդիկ թէ քաղաքագլխի և թէ միւս պաշտօնների համար:

Մեր հասարակական կլուբը անցեալ տարի համարեա անուսով միայն կար: Այժմ տեղական ինտելիգենցիան, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ յետին գիւղն անգամ ունի իր «սաքիուն» ձմեռ ժամանակ և «գեղամէջը» տարվայ միւս եղանակներում, ուր հաւաքվում են գիւղացիները և խօսում, վիճում, դատում իրանց առօրեայ կեանքի մասին, իսկ իրանց քաղաքը զուրկ է կանոնաւոր կլուբից, եռանդուն կերպով աշխատում է հաստատ հիմքերի վրա դնել կլուբը: Սորագրութիւն բացվեց և կարճ միջոցում անդամների թիւը յիսունից անցաւ: Յունվարի 31-ի ընդհանուր ժողովում կայացաւ եօթն աւագների ընտրութիւնը: Կլուբի ապագայ առաջադիմութիւնը կախված կը լինի խիստ դիսցիպլինայից...

Փետրվարի 1-ին, քաղաքային դպրոցի դահլիճում, նոյն դպրոցի ինսպեկտոր Ն. Դէվդորիանի նախաձեռնութեամբ, անցեալ տարվայ նըման, կայացաւ ձրի աշակերտական գրականական երեկոյ: Երեկոյի ծրագիրը հմուտ կերպով էր կազմված և ամեն միջոց գործ էր դրված հանդիսականներին բաւականացնելու և զուարճացնելու համար: Երեկոն գրաւել էր երկու սեռի խուռն բազմութիւն: Անտրակտներում նուագում էր տեղական զինուորական երաժշտական խումբը: Հանդէսը վերջացաւ կենդանի պատկերներով:

Ս. Դ.

ՆԱՄԱԿ ԳԱԶԱՐԻՑ

Փետրվարի 6-ին

Նահանգապետի կարգադրութեամբ այս օրերս դուսյի ձայնաւորները քաղաքագլուխ Թադոսեանին և քարտուղար Կաբախիձէին ընտրեցին գնալու Պետերբուրգ, դէպի Գազար չինովնիք երկթուղու ճիւղի մասին աշխատելու համար: Աջողութիւն ենք ցանկանում, միայն թող գնացողները տեղական պայմանների մասին մանրամասն տեղեկութիւններ ժողովեն և հէնց Գազարում իրանց աշխատելու և գործը գլուխ բերելու ձեր մօտաւորապէս որոշեն, և ոչ թէ զանազան ժամանակներում գնացած պատգամաւորների նման անպատրաստ գնան և ծախսած հազարների մասին հաշիւ անգամ չը տան:

Հայ սիրողները այս ձմեռվայ ընթացքում տուին երկու ներկայացումն ռուսերէն լեզուով. առաջինը անցեալ դեկտեմբերի 22-ին, յօգուտ ռուսաց նորաբաց օրիորդական ծխական դպրոցի, և երկրորդը՝ այս ամսի 3-ին, յօգուտ մի չքաւոր ուսանողի: Երկրորդ ներկայացումը աւելի աջող անցաւ և մեծ բազմութիւն էր գրաւել հայերից և ռուսներից: Երկու անգամ ես կանայք աւելի աջող խաղացին, քան տղամարդիկ, որոնց մէջ գտնվեցին այնպիսիները, որ եթէ բեմից ձեռք վերցնէին, թէ բեմը և թէ իրանց ազատած կը լինէին խայտառակվելուց: Յօգուտ ռուսաց դպրոցի զուտ արդիւնքը մնաց 80 ր., յօգուտ ուսանողի՝ 150 ռուբլի:

Գովելի է մեր սիրողների եռանդը, մանաւանդ այն կողմից, որ դեռ մի քանի ամիս է, ինչ որ բացվել է վերոյիշեալ դպրոցը, և մինչ ռուսները չը մտածեցին ներկայացումն տալ նրա օգտին, առաջին անգամ հայ սիրողները օգնութեան հասան: Փոքրիկ, բայց ընտրոյ դէպքից թող ամաչեն անտատամ «Զուբօկ»-ները, «Անտիկվարի»-ները և «Կավկազեց»-ները:

Նոյն սիրողները պատրաստվում են երրորդ անգամ մի ներկայացումն տալ, հայերէն լեզուով, յօգուտ քաղաքային նորատունկ այգու: Այդ էլ շատ համակրելի միտք է, որովհետև մեր նեղված ու ճահիճների հոտից ազատված Գազարին անպայման հարկաւոր են այդպիսի ծառատունկեր՝ օդի մաքրութեան համար: Մանաւանդ որ լուր է պտտում, թէ քաղաքային վարչութիւնը չէ ցանկանում յիշեալ այգու պահպանութեանը նպաստել, դրամի պակասութիւնը առաջ բերելով և մինչև անգամ ցանկութիւն ունի խափանել այգին: Այդ էլ շատ գովելի վարմունք է. չէ՞ որ ուրիշների չինածը քանդելն էլ գործունէութիւն է համարվում մեզանում...

Գ. Ե.

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Փետրվարի 7-ին

Գուցէ ոչ մի տարի Ղուբայում չէ եղել այն տեսակ էժանութիւն, ինչ որ տեսնում ենք այս տարի: Բոլոր մթերքները առատ են և առնող չը կայ: Վերցնենք, օրինակ, ցորենը, գարին.—ցորենի պուդը ծախվում է 30—35 կոպէկով, սակայն առնող չը կայ. գարին 20—25 կ. պուդը. իւղի ֆունտը՝ 18—20 կոպ., այն ինչ անցեալ տարի այս ժամանակ ծախվում էր 30 կոպ. և աւելի էլ, և չէր էլ գտնվում. ձուի 5 հատը՝ 5 կ., իսկ անցեալ տարի 3 հատը՝ 5 կ. ոչխարի մսի ֆունտը՝ 9 կոպ., այն ինչ անցեալ տարիները 13—15 կոպէկից պակաս չէ ծախվել, և այլն և այլն: Այդ բոլորի պատճառները վերագրում են նրան, որ փող չը կայ և առեւտուրը սաստիկ ընկած է. գանգատվում են բոլորը:

Մի վատ սովորութիւն ունեն այստեղի այգեպէտերը: Աշունը սկսվելուն պէս, սկսում են իրանց մթերքները՝ խնձոր, տանձ, չորացրած տանձ, սալոր և թթու (լաւաշանա) բոլորն էլ մեծ քանակութեամբ արտահանել Աստրախան, Ռուսաստան և նոյն իսկ Բագու, և համարեա ոչինչ չեն թողնում այստեղ՝ քաղաքում ծախելու: Մեծ այգեպէտերի հետ մրցում են փոքրները: Ամեն տարի պտղեղէն արտահանողների թիւը այժմ ձեզ պէս տիկիններ են: Հաւատալ չէ լինում. կարծես դեռ երէկ էր, որ միասին ուսումնարան էինք գնում:

—Թողնենք այդպիսի հարցերը, որ մեծ մասամբ անլուծելի են մնում: Դուք այն ասացէք, որտեղ էիք անցեալ տարի. որքան գիտեմ, Թ—ում չը կայիք. ձեր մայրն ասում էր թէ ինքն էլ չը գիտէ ձեր տեղը և ձեր գործի անունը:

—Անցեալ տարի էլ ես նոյն այս պաշտօնումն էի, միայն ուրիշ տեղ: Իմ մայրը... ես դէպի մի կողմ եմ ձգում, իսկ նա դէպի հակառակ կողմը. մենք միմեանց հասկանալ չենք կարող: Հայ ուսուցչի բախտը այսպէս է. գոնէ հարազատ, ծնող մայրը հասկանար թէ ինչ է նա, այդ ուսուցիչը: Իմ մայրը պահանջում է «մարդ դառնալ». բայց ուսուցիչը... դուք գիտէք, որ նա բոլորովին ուրիշ մտքի ստրուկ է. և նա գնում է իր խաչը տանելու, որ այսպիսի ժամանակներում մարդկանց ծաղրի առարկայ դառած մի ծանր բան է:

Երիտասարդը դարձեալ անցաւ գանգատներին: Ուրիշ կերպ չէր էլ կարող անել... Մարդկանց մէջ նա կարօտում էր համակրանքի, ուզում էր գտնել մի կարեկից սիրտ: Եւ ահա վաղեմի ծանօթը. միթէ նա էլ չի հասկանայ, թէ ինչ է ուզում նա ասել և միթէ նա էլ կը զլանայ մի լոկ համակրանքով խրախուսել նրան: Նրա թուխ աչքերը սպիտակուցի վրա շուռ էին եկել, բայց ուռանքն էին որոնում տիկնոջ գեղեցիկ դէմքի վրա:

Բայց իզուր...

Խօսակցութիւնն այնպէս էր գրաւել երկու բարեկամներին, որ նրանք չը նկատեցին, որ մենակ են մնացել, ամենքը ցրվել են: Իսկ Մահտեսին... Նա սառել էր, փայտ էր կտրել. նրա մարած աչքերը սպիտակուցի վրա շուռ էին եկել, բայց ձմեռվայ գորշ ամպերի միջից ուղղած շանթը չէր հանդիպում հարսի հայեացքին: Ժամերներն էին մնացել. նրանք էլ փակեցին դռները և անցան, զարմացած նայելով Մահտեսուն և երկու խօսակիցներին: Թուլութեան, սառնութեան ցրդնաժամն անցաւ. նա դանդաղ քայլերով մօտեցաւ. կապտած շրթունքները շարժվեցան և նա, ձեռափայտի ծայրով ցոյց տալով ճանապարհը, ասաց.

—Տուն գնա...

Նինօն իսկոյն հնազանդվեց և ձեռք տուեց իր ծանօթին: Մի ակնթարթում կատարված իրողութիւնը հասկացրեց երիտասարդին թէ բանն ինչումն է և նա ռուսերէն լեզուով հարցրեց.

—Գոնէ կարելի է ձեզ մօտ լինել, քիչ խօսել:

—Խնդրեմ, համեցէք, պատասխանեց տիկինը և հեռացաւ:

(Կը շարունակվի)

Ուսալէնակի մայր եկեղեցում օծման հանդիսին մասնակցելու և Նոցա Կայսերական Մեծութիւններին շնորհաւորութիւններ մատուցանելու հրաւիրված անձանց թւում գտնվում են օտար դաւանութիւնների հետեւեալ ներկայացուցիչները. 1) Հռոմէական-կաթոլիկ դաւանութեան կողմից—Վարշավայի արքեպիսկոպոսը. 2) Հայ-լուսաւորչական եկեղեցու կողմից—ամենայն հայոց Կաթողիկոսը, կամ անձամբ, կամ ներկայացուցչի միջոցով, և Աստրախանի թեմական առաջնորդը. 3) Աւետարանական-լութէրական դաւանութեան կողմից—լութէրական ընդհանուր կոնսիստորիայի նախագահը և Մոսկվայի կոնսիստորիայի փոխնախագահը:

Թագադրութիւնից յետոյ Նոցա Կայսերական Մեծութիւններին շնորհաւորութիւններ պէտք է մատուցանեն. 1) մահմեդական դաւանութեան կողմից--Օրէնբուրգի, Տաւրիկեան նահանգի և Անդրկովկասի մուֆթիները, ինչպէս և Անդրկովկասի Շեյխ-ուլ-իսլամը. 2) կարիմ դաւանութեան կողմից—Եւպատորիայի գալամը իր երկու օգնականներով. 3) լամայական դաւանութեան կողմից—Արևելեան-Սիբիրի լամայական հոգևորականութեան բանդիդո-խամբան և կալմուկ ժողովրդի լաման:

Թագադրութեան հանդիսին ներկայ գտնվելու և մասնակցելու հրաւիրված են, առհասարակ, հետեւեալ դասակարգերի և հաստատութիւնների ներկայացուցիչները.—1) աղնուականութեան, 2) զեմստվոների. 3) քաղաքային ազգաբնակութեան, 4) գիւղական ազգաբնակութեան, 5) օտար դաւանութիւնների հոգևորականութեան, 6) կոզակների, 7) զինուորական կառավարութիւն ունեցող շրջանների և 8) Ֆինլանդիայի:

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Փետրվարի 4-ին

Ներկայ թուականին Նախիջևանումն էլ պէտք է մանի կրճատված քաղաքային ինքնավարութիւն: Այս առիթով տպագրած և կպցրած են պատերին այն անձանց անուանացուցակները, որոնք իրաւունք են ստանում մասնակցելու քաղաքային ընտրութիւններին: Ինչպէս լսում ենք, մինչև ապրիլ ամիսը կը կայանայ քաղաքային ձայնաւորների ընտրութիւնը և ապա վերջիններս կընտրեն քաղաքագլուխ և այլ պաշտօնեաներ: Ահա այս է պատճառը, որ մեր քաղաքը անսովոր կենդանութիւն է ստացել: Ամենքը ուրախութեամբ և լարված ուշադրութեամբ ըսպասում են ընտրութիւնների վախճանին և ամենքին զբաղեցնողը մի հարց է՝ թէ ով կընտրվի քաղաքագլուխ: Առ այժմ, որպէս քաղաքագլխի թեկնածուների, ժողովրդի մէջ խօսվում է Բաքու Մելիք-Բաբախանեանցի, որը այժմ քաղաքային դեպուտատ է, և Ջաֆար-Կուլի-խանի մասին: Սրանցից առաջինը ժողովրդականութիւն է վայելում և հաւանական կանդիդատն է համարվում քաղաքագլխի պաշտօնի համար:

ՆԱՄԱԿ ԳԱԶԱՐԻՑ

Փետրվարի 6-ին

Նահանգապետի կարգադրութեամբ այս օրերս դուսյի ձայնաւորները քաղաքագլուխ Թադոսեանին և քարտուղար Կաբախիձէին ընտրեցին գնալու Պետերբուրգ, դէպի Գազար չինովնիք երկթուղու ճիւղի մասին աշխատելու համար: Աջողութիւն ենք ցանկանում, միայն թող գնացողները տեղական պայմանների մասին մանրամասն տեղեկութիւններ ժողովեն և հէնց Գազարում իրանց աշխատելու և գործը գլուխ բերելու ձեր մօտաւորապէս որոշեն, և ոչ թէ զանազան ժամանակներում գնացած պատգամաւորների նման անպատրաստ գնան և ծախսած հազարների մասին հաշիւ անգամ չը տան:

Հայ սիրողները այս ձմեռվայ ընթացքում տուին երկու ներկայացումն ռուսերէն լեզուով. առաջինը անցեալ դեկտեմբերի 22-ին, յօգուտ ռուսաց նորաբաց օրիորդական ծխական դպրոցի, և երկրորդը՝ այս ամսի 3-ին, յօգուտ մի չքաւոր ուսանողի: Երկրորդ ներկայացումը աւելի աջող անցաւ և մեծ բազմութիւն էր գրաւել հայերից և ռուսներից: Երկու անգամ ես կանայք աւելի աջող խաղացին, քան տղամարդիկ, որոնց մէջ գտնվեցին այնպիսիները, որ եթէ բեմից ձեռք վերցնէին, թէ բեմը և թէ իրանց ազատած կը լինէին խայտառակվելուց: Յօգուտ ռուսաց դպրոցի զուտ արդիւնքը մնաց 80 ր., յօգուտ ուսանողի՝ 150 ռուբլի:

Գովելի է մեր սիրողների եռանդը, մանաւանդ այն կողմից, որ դեռ մի քանի ամիս է, ինչ որ բացվել է վերոյիշեալ դպրոցը, և մինչ ռուսները չը մտածեցին ներկայացումն տալ նրա օգտին, առաջին անգամ հայ սիրողները օգնութեան հասան: Փոքրիկ, բայց ընտրոյ դէպքից թող ամաչեն անտատամ «Զուբօկ»-ները, «Անտիկվարի»-ները և «Կավկազեց»-ները:

Նոյն սիրողները պատրաստվում են երրորդ անգամ մի ներկայացումն տալ, հայերէն լեզուով, յօգուտ քաղաքային նորատունկ այգու: Այդ էլ շատ համակրելի միտք է, որովհետև մեր նեղված ու ճահիճների հոտից ազատված Գազարին անպայման հարկաւոր են այդպիսի ծառատունկեր՝ օդի մաքրութեան համար: Մանաւանդ որ լուր է պտտում, թէ քաղաքային վարչութիւնը չէ ցանկանում յիշեալ այգու պահպանութեանը նպաստել, դրամի պակասութիւնը առաջ բերելով և մինչև անգամ ցանկութիւն ունի խափանել այգին: Այդ էլ շատ գովելի վարմունք է. չէ՞ որ ուրիշների չինածը քանդելն էլ գործունէութիւն է համարվում մեզանում...

Գ. Ե.

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Փետրվարի 7-ին

Գուցէ ոչ մի տարի Ղուբայում չէ եղել այն տեսակ էժանութիւն, ինչ որ տեսնում ենք այս տարի: Բոլոր մթերքները առատ են և առնող չը կայ: Վերցնենք, օրինակ, ցորենը, գարին.—ցորենի պուդը ծախվում է 30—35 կոպէկով, սակայն առնող չը կայ. գարին 20—25 կ. պուդը. իւղի ֆունտը՝ 18—20 կոպ., այն ինչ անցեալ տարի այս ժամանակ ծախվում էր 30 կոպ. և աւելի էլ, և չէր էլ գտնվում. ձուի 5 հատը՝ 5 կ., իսկ անցեալ տարի 3 հատը՝ 5 կ. ոչխարի մսի ֆունտը՝ 9 կոպ., այն ինչ անցեալ տարիները 13—15 կոպէկից պակաս չէ ծախվել, և այլն և այլն: Այդ բոլորի պատճառները վերագրում են նրան, որ փող չը կայ և առեւտուրը սաստիկ ընկած է. գանգատվում են բոլորը:

Մի վատ սովորութիւն ունեն այստեղի այգեպէտերը: Աշունը սկսվելուն պէս, սկսում են իրանց մթերքները՝ խնձոր, տանձ, չորացրած տանձ, սալոր և թթու (լաւաշանա) բոլորն էլ մեծ քանակութեամբ արտահանել Աստրախան, Ռուսաստան և նոյն իսկ Բագու, և համարեա ոչինչ չեն թողնում այստեղ՝ քաղաքում ծախելու: Մեծ այգեպէտերի հետ մրցում են փոքրները: Ամեն տարի պտղեղէն արտահանողների թիւը աւելանում է. մինչև անգամ այստեղ հասարակ «բախկալներն» էլ են այդ գործին ձեռնամուխ լինում: Ասում են, որ արտահանողները անցեալ աշնանը մեծ ՇՆամներ են կրել:

Բարեկենդանը տխուր անցաւ՝ առանց թատրոնական ներկայացումների: Մինչև անգամ հայոց դպրոցը, հակառակ ամեն տարվայ սովորութեան, ոչինչ չէր պատրաստել վարդանանց տօնի առիթով:

Մ. Ս.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, փետրվարի 7-ին

Խնդրում եմ «Մշակի» մէջ մի անկիւն շնորհել երկտողիս:

Մեծապատիւ բժշկապետ Յովհաննէս Գասպարեանց, ի նկատի ունենալով իմ վանահայրական խնամատարութեանը յանձնված ս. Հռիփսիմէի վանքի անփառունակ վիճակը, ի նկատի ունենալով միանգամայն և նուաստիս՝ սոյն խղճալի վանքը աւերութիւնից դէպի բարեզարդութիւն հանելու ձգտումն ու փափագը, ի նպաստ վանքիս մէջ կառուցանելի սրբատաշ քարուկիր շինութիւնների և նորոգութիւնների՝ որոնց ձեռնամուխ եմ եղել դեռ 1894 թվից, ուղարկել է ինձ միանուագ 200 ռուբլի: Պ. բժշկապետին իր այս առատաձեռն նուիրաբերութեան համար երկտողս յայտնում եմ իմ սրտագին գոհունակութիւնը:

«Մշակի» 9-րդ համարում վանքիս անունով զանազան անձերից ստացած նուէրների թւում տպված էր—«Երևանցի Եվրեմ Դեկարխանեանի ձեռքով—100 ր.», որից հակացվում է, իբր այս գումարը հանգանակված է նրա ձեռքով, մինչդեռ այդ գումարը չէ հանգանակված, այլ մեծապատիւ նուիրատուն ուղարկել է իր սեփականութիւնից. ուստի և հարկ համարեցի այս սխալն ուղղել:

Վանահայր ս. Հռիփսիմէի վանքի՝

Երեմեա եպիսկոպոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք, որ ամենայն հայոց Կաթողիկոսը մտադիր է անձամբ ներկայ լինել Նոցա Կայսերական Մեծութիւնների թագադրութեանը՝ մայիս ամսին:

—

Երէկ, չորեքշաբթի, փետրվարի 14-ին, Ներսիսեան դպրոցում կատարվեց տարեկան հանդէսը: Ներկայ էին՝ թեմական առաջնորդը, հոգաբարձուները, ուսուցչական խումբը և բազմաթիւ հասարակութիւն երկու սեռից: Հանդէսը սկսվեց Ներսէսի շարականով և Կայսերական օրհներգով, որ երգեց աշակերտական երգեցիկ խումբը: Դպրոցի տեսուչը, Սամուէլ Բալաշեան, կարդաց դպրոցի ուսումնական տեղեկագիրը, որից երևաց, որ անցեալ 1894/95 ուսումնական

տարում ուսանում են եղել 440 աշակերտ. նրանցից 25 որդեգիր և 30 թոշակաւոր: Ուսումնական մասի հաշւից յետոյ, հերթակալ հոգաբարձու Ա. Քալանթար կարդաց տնտեսական մասի տեղեկագիրը, որից երևաց, որ դպրոցը ունի առ 1-ն յունվարի 1896 թւի 218,142 ր. 43 կոպ.: Այդ գումարից 59,948 ր. 97 կ. յատկացրած է դըպրոցի նոր շինութեան համար: Ներկայ 1896 թւի նախահաշւով մուտք սպասվում է 62,571 ր. և ծախս 61,891 ր. 62 կ.: Հոգաբարձութիւնը որոշագրել է տուել այս տարվայ տեղեկագիրը, որ բաժանվեց հանդիսականներին: Աշակերտական խումբը երգեց մի քանի երգեր աջող կերպով, Շատ գուրեկան էին Նալբանդեան և Թալանեան աշակերտների solo երգերը: Կարդացվեցին ոտանաւորներ: Հանդէսը վերջացաւ ժամը 2-ին կրօնական երգով:

—

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովը, որ կայացաւ փետրվարի 13-ին, որոշեց՝ խնդրել խորհրդից, որ ընկերութեան օրգանի իրական խմբագրի պաշտօնի կանչվելը յետաձգվի, մինչև որ կընտրվեն խմբագրական մասնաժողովի անդամները, փոխ-նախագահը, խորհրդի չորրորդ անդամը և կընդունվի խորհրդի առաջարկած ծրագիրը՝ խմբագրական գործերի վերաբերմամբ:

—

Պետերբուրգի Բժշկական ակադէմիայում, պրոֆէսոր Բոտիմովի վիրաբուժական կլինիկայում, յունվարի 30-ին, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, տեղի ունեցաւ առաջին անգամ Ռուսաստանում մի օպէրացիա, որի համար գործադրեցին անտեսանելի առարկաների լուսանկարելու եղանակը, որ գտել է պրոֆէսոր Ռէնտգէն: Օպէրացիային ենթարկվեց Ավդոտիա Օրլովա անունով մի գեղջուհի, որի աջ ձեռքի բթամատի մէջ մի քանի օր առաջ ցցվել էր երկու սանտիմէտր երկարութիւն ունեցող ասեղի մի կտոր: Ասեղի գտնվելու տեղը սովորական եղանակով որոշելը անհնար էր, բայց Ռէնտգէնի մեթոդի օգնութեամբ ստացվեց ձեռքի ոսկորների նկարը և բթամատի տակը, շերտի նման, պարզ կերպով երևում էր ասեղը: Հետևեալ օրը բժիշկ Շլէս հեշտութեամբ հանեց ասեղը և հիւանդն արդէն առողջանում է:

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց առաջնորդը կոնսիստորիային է յանձնել հասարակութիւնից հանգանակած փողը՝ աղքատներին բաժանելու համար: Շատ աւելի լաւ կը լինէր այդ գումարը յանձնել Բարեգործական ընկերութեանը, որպէս զի նա բաժանէ աղքատներին:

—

Եւպատորիայից, Մինաս Աէֆէրեանց նուիրեց 1896 թւի «Մշակի» մի օրինակ այդ քաղաքի հայոց դպրոցին:

—

Երկրագործութեան մինիստրութիւնը մտադիր է մի մեծ ընդհանուր քարտէզ հրատարակել, որի վրա նշանակված կը լինեն Ռուսաստանի զանազան նահանգների հողերը իրանց կազմութեան և յատկութեան տեսակէտից: Այդ քարտէզը պէտք է ցոյց տայ, թէ ինչ տեղերում հողը կաւային է, ինչ տեղ աւազոտ, ինչ տեղ կրախառն և այլն: Ինչքան մեզ յայտնի է, Անդրկովկասում չեն կատարված գիտական լուրջ հետազօտութիւններ հողի այն շերտի մասին, որ նշանակութիւն ունի երկրագործութեան համար, և ուրեմն Կովկասի մասը կամ կը մնայ բացակայ վերև յիշած քարտէզում, կամ կազմված կը լինի սխալ, ենթադրաբար: Ցանկալի է, որ գոնէ այժմ հետազօտվէին Անդրկովկասի հողերը և կազմվէր նրանց ճիշդ նկարագիրը:

—

ԱՍԿԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 8-ին, առաւօտեան ժամը 10-ից 25 րոպէ անց, տեղի ունեցաւ երկրաշարժ: Բաւականին զօրեղ ցնցումից՝ շատ տեղերում լամպաները ճօճվեցին մի քանի րոպէ»:

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 3-ին սիրողները ներկայացրին «Բանդած օջախ» կոմէդիան և «Սիրահարը սեղանի տակ» վոդէվիլը: Թէպէտ ծննդեան տօներին ներկայացնելու համար պատրաստված էր «Դարբնապետ» պիէսը, բայց մի քանի պատճառներով չը կարողանալով գլուխ բերել գործը, սիրողները սկսեցին մի երկրորդ ներկայացման համար պատրաստվել, և ահա բարեկենդանի վերջերին աջողվեց դէթ այս մէկ ներկայացումը տալ: Սիրողները անպատրաստ էին և ներկայացումը անցաւ թոյլ: Չը նայելով որ դժուարութեամբ է աջողվում ներկայացում կայացնել և թատրոնական ներկայացումները հաղուագիւտ են դառնում, սակայն ներկայ եղող հասարակութիւնը բազմաթիւ չէր: Մենք յիշում ենք, դեռ անցեալ տարի մեր փոքրիկ քաղաքում աջողվեց մի քանի ամսվայ ընթացքում երեք ներկայացում տալ: Իսկ այսօր անցեալ տարին երանութեան ժամանակ է համարվում. և այս պայմաններում անտարբեր մնալ դէպի ներկայացումը և դէպի սիրողների աշխատութիւնը,—անսպասելի և մինչև անգամ պախարակելի մի երևոյթ է»:

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են. «Մի քանի տարի է, որ մեր հասարակութիւնը առիթ է ունենում մեր Եկեղեցիներում լսելու կանոնաւոր երգեցողութիւն և այդ՝ շնորհիւ երգեցողութեան արհեստին ծանօթ ուսուցիչների և նրանց կազմած աշակերտական խմբերի: Այս տարի նոյն հասարակութեանը առաջին անգամն է աջողվում լսելու քառաձայն պատարագի արարողութիւն և այդ՝ շնորհիւ ուսուցչական խմբի, որոնցից չորսը մասնակցել են Կարա-Մուրզայի խմբում: Ճշմարիտ է, ձայների պակասութիւն է նկատվում, բայց և այնպէս աջողվում է հասարակութեան մի գաղափար տալ քառաձայն երգեցողութեան մասին: Այդ բանը աւելի կարող էր աջողվել խմբին, եթէ քահանաների և սարկաւագների ձայները յարմար լինէին և կարողանային հետևել խմբին, սակայն այդ բանը պակասում է: Խումբը, առաջնորդվելով երգեցողութեան ուսուցիչ Արշակ Մեհրաբեանցի, առիթ է ունեցել այս կամ այն եկեղեցում մի քանի անգամ երգելու կամ քառաձայն կամ երկու ձայնով: Ժողովուրդը սկսում է կամաց-կամաց համակրել այդ տեսակ երգեցողութեան»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մեզ գրում են Վիէննայից, փետրվարի 5/17-ից, որ Զէյթունցիների և Թիւրքաց կառավարութեան մէջ ընդունված պայմանների համաձայն, Զէյթունը պէտք է ունենայ տեղական միլիցիա, բաղկացած քրիստոնեաներից:

—

Վանից մեզ գրում են. «Պօղոս եպիսկոպոս Մելիքեան, որի մահը տեղի ունեցաւ Ծննդեան առաւօտը, թաղվեց յունվարի 9-ին Հայկավանուց եկեղեցու մէջ: Նա 80 տարեկան էր»:

—

Ռուսաց գործակալութիւնը հաղորդեց արդէն, որ Զէյթունի բնակիչները, լինեն դրանք քրիստոնեայ թէ մահմեդական, պէտք է յանձնեն կառավարութեան իրանց պատերազմական զէնքերը: Բէյտերի գործակալութիւնը դրան աւելացնում է, որ Զէյթունի կառավարիչ կը նշանակվի մի քրիստոնեայ, որ կը մտցնի բէֆորմներ պետութիւնների և սուլթանի համաձայնութեամբ: Ինչ վերաբերում է զէյթունցիների փոքրամասնութեան պահանջին՝ դուրս հանել Զէյթունից թիւրքաց զօրապահակը, սուլթանը անկարելի է գտնում այդ պահանջը: Զէյթունցիները վերջի վերջոյ գոհ մնացին կայացած հաշտութիւնից:

—

Լօրդերի ժողովում մարկիզ Սալսբիւրին, պատասխանելով լօրդ Բոզբէրիին, հետևեալն ասաց. «Լօրդ Բոզբէրին հարցնում է ինձ, թէ ինչու մենք ինքնավարութիւն չը պահանջեցինք Հայաստանի համար: Բայց միթէ ինքն լօրդ Բոզբէրին անցեալ տարի մայիսին առաջարկեց այդպիսի ինքնավարութիւն. միթէ նա խօսել է այն մասին, թէ պէտք է ոյժի դիմել և պատերազմ հրատարակել այն դէպքում, եթէ սուլթանը չը համաձայնի կատարել Անգլիայի պահանջները:

«Ես հերքում եմ այն ամբաստանութիւնը, թէ մենք ներկայումս ձեռք ենք քաշել հայերից և թէ մեր գործունէութիւնը նրանց ոչ մի օգուտ չը տուեց: Նոյնպէս սխալ է կարծել, թէ պետութիւնները հրաժարվել են իրանց դիտաւորութիւնից՝ միաբան ճնշում գործել Թիւրքաց կառավարութեան վրա և Փոքր-Ասիայում բարեքել գործերի վիճակը և կառավարութիւնը: Պետութիւնները միայն կարծում են, թէ պէտք է ժամանակ տալ սուլթանին այդ բարեփոխութիւնները կատարելու և չատ էլ նեղը չը գցել նրան:

«Եթէ պարլամէնտը կարծում է, թէ Անգլիան կարող է ինքնավարութիւն մտցնել Հայաստանում զէնքի ոյժով, թող նա անի այդ բանը: Բայց եթէ դուք չէք կարող այդ անել, այն ժամանակ պէտք է զգուշանաք կրքերը գրգռելուց և յուզմունք չը պէտք է առաջ բերէք դաշնակիցների մէջ, որոնց օգնութեամբ միայն կարող ենք լաւ հետևանքների հասնել:»

—

Համայնքների ժողովում լօրդ Գոշէնը յայտնեց հետևեալը.—որովհետև սուլթանը չիրագործեց և չը մտցրեց իր խոստացած բէֆորմները Հայաստանում, ուստի Անգլիան ազատ է որ և է պարտաւորութիւնից՝ պաշտպանելու օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը Փոքր-Ասիայում:

—

Կ. Պոլսից հաղորդում են, որ Զէյթունի ապատամբութեան վեց գլխաւոր պարագլուխները, որոնք պէտք է արտաքսվեն Թիւրքիայի սահմաններից, ուղարկվել են Մէրսին, անգլիական հիւպատոսարանի թարգմանի և կավասների ընկերակցութեամբ: Մէրսինից նրանց կուղարկեն Մարսէյլ: Զէյթունի բնակիչները երդում են տուել, որ այսուհետև Թիւրքիայի հաւատարիմ հպատակներ կը մնան:

—

«Daily Chronicle» լրագիրը հաղորդում է, որ իբրև թէ իր մինիստրութեան միջոցին լօրդ Բոզբէրին դիմել է ռուսաց կառավարութեան և հարցրել, թէ արդեօք մտադիր է նա որ և է միջոցներ ձեռք առնել Փոքր-Ասիայում աւելի լաւ կառավարութիւն հաստատելու համար: Ռուսաստանը իբր թէ բացասական պատասխան է տուել: Այն ժամանակ լօրդ Բոզբէրին հարց դրեց, թէ արդեօք Ռուսաստանը կը միջամտի, եթէ Անգլիան վճռի յարձակողական գործողութիւնների դիմել: Այդ հարցմունքին ևս Ռուսաստանը բացասական պատասխան տուեց:

—

«Glasgow Herald» լրագրի Լօնդոնի թղթակիցը հաւատացնում է, որ Գլադստոն մեծ տրամադրութիւն է ցոյց տալիս համայնքների ժողովի անդամ ընտրվել, և այն էլ անկախ անդամ: Այժմեան մինիստրութեան քաղաքականութիւնը հայոց հարցում և լօրդ Սալսբիւրիի ճառը նէոկոնֆէդերմիստների բանկէտում այնպէս կատաղեցրին Գլադստոնին, որ նա ցանկանում է կրկին կռիւ սկսել իր հակառակորդի դէմ քաղաքական ասպարէզում: Իր բարեկամների հետ խօսակցելու ժամանակ Գլադստոն այն միտքն է յայտնել, թէ «երկու կուսակցութիւններն ևս դաւաճանեցին հայերի գործին:»

—

Ռուսաց գործակալութեան հեռագիրը նորից հաստատվում է: Կ. Պոլսից «Times» լրագրին հեռագրում են, որ Զէյթունում ապաստան գըտած փախստականները, թւով 13,000, ներկայումս չափազանց թշուառ դրութեան մէջ են գտնվում: Նրանք խումբ-խումբ ուղարկվում են իրանց նախկին գիւղերը: Հիւպատոսները կ նրանց լիազօրները հովանաւորում են նրանց:

ԱԲԻՍԻՆԻԱՆ ԵՒ ԻՏԱԼԻԱՆ

—

Քաղաքական աշխարհի ուշադրութիւնը գրաւող դէպքերից մէկն ևս ներկայումս Աբիսինիայի և Իտալիայի մէջ ծագած պատերազմն է: Այդ դէպքը ունի իր պատմութիւնը, որի հետ հարկաւոր է ծանօթանալ՝ ինդրի էութիւնը ուղիղ ըմբռնելու համար:

Եւրոպական պետութիւնները վաղուց իրանց ուշադրութիւնը դարձրել են Աֆրիկայի վրա և գրաւել են այդ երկրի զանազան մասերը մի քանի պատրուակներով. ոմանք քաղաքակրթութիւն տարածելու, ոմանք գաղթականութիւններ հաստատելու, ոմանք էլ գերեվաճառութիւնը ջնջելու նպատակով: Սակայն, որպէս զի միմեանց արգելք չը հանդիսանան, եւրոպական պետութիւնները իրանց ազդեցութեան և գործունէութեան ասպարէզի համար որոշ սահմաններ են գծել. այսպէս, օրինակ, Ֆրանսիան հաստատվել է Ալժիրայում, Անգլիան—Եգիպտոսում, Գերմանիան—արևելեան Աֆրիկայում, Պորտուգալիան—Մոզամբիկում, Թիւրքիան—Յունիսում: Միայն Իտալիան էր, որ չը կարողացաւ մասն ունենալ այդ բաժանման մէջ, ուստի և որոշեց մի այնպիսի անկիւն գտնել ծովի ափին, որը միանգամայն դուրս լինէր այդ պետութիւնների ազդեցութեան շրջանից: Նրա ջանքերն ապարդիւն չանցան. այդպիսի մի անկիւն գտնվեց Կարմիր ծովի ափին և 1869 թւին մի իտալացի նաւագործ, Ռուբատինօ անունով, գնեց ագար ցեղի բասաների (գլխաւոր) մէկից Ասաբ նաւահանգիստը և նրա շրջակայ փոքրիկ կղզիները 47,000 ֆրանկով: Այդտեղ իտալացիները դիտաւորութիւն ունէին կազմել մի կենտրոն՝ Շօայից եկող բոլոր կարաւանների և ապրանքների համար:

Ասաբում հաստատված իտալական փոքրիկ գաղթականութիւնը չուտով յարուցեց իր դէմ Անգլիայի դժգոհութիւնը. սակայն Իտալիան հաւատացրեց, թէ նա, հաստատելով այդ կօլօնիան Կարմիր ծովի ափին, նպատակ է ունեցել միայն պաշտպանել իտալացի ճանապարհորդներին և աջակցել միւս պետութիւններին՝ գերեվաճառութեան դէմ հրատարակած կռիւի մէջ: Անգլիան բաւականացաւ այդ յայտարարութեամբ և Իտալիան 1879 թւին արդէն պաշտօնապէս մի կօմիսար հաստատեց Ասաբում:

Կարմիր ծովի ափին հաստատած իրանց այդ կօլօնիան իտալացիները անուանեցին «Էրիտրէա» կլասիկական անունով: Այդ օրից Իտալիան ձըգտեց ընդարձակել իր տիրապետութիւնը Աֆրիկայում և չարունակ, մինը միւսի ետեից, զանազան միսիաներ էր ուղարկում Աֆրիկայի զանազան ցեղերի մօտ: Այդ միսիաներից մէկը առաջարկեց Շօաի տիրապետող Մէնէլիքին՝ Իտալիայի հետ համաձայնութեան մէջ մտնել: Այդ առաջարկութիւնն արվեց ճիշդ այն ժամանակ, երբ Եգիպտոսում ծագեց Մահդիի ապստամբութիւնը, տեղի ունեցաւ Խարտումի առումը և անգլիական զօրապետ Գօրդօնի սպանութիւնը: Իբրև հետևանք այդ համաձայնութեան, 1885 թւին Իտալիան մի ծովային զօրախումբ ուղարկեց Մասսօվա կղզին, որ պատկանում էր Եգիպտոսին և եգիպտական դրօշակի հետ միասին մնկեց նաև իտալական դրօշակը: Եգիպտական խէդիվը բողոքեց եւրոպական պետութիւններին Իտալիայի այդ ընթացքի դէմ, անուանելով նրա վարմունքը վայել «ծովահէններին», բայց Իտալիան յայտարարեց, որ նա գրաւել է կղզին միայն հասարակական կարգը պահպանելու նպատակով: Մի քանի ամսից յետոյ Մասսօվայում սկսվեց արդէն ծածանվել իտալական դրօշակը. եգիպտական զօրքը արտաքսվեց և նրա տեղ հաստատվեց իտալական զօրախումբ:

(Կը չարունակվի)

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՑԻՑ

—

Վ ա ն, յունվարի 24-ին

Շուկան դեռ փակ կը մնայ. շատ քիչեր են բացող:

Հիւանդութիւններ ալ չատ կան, տիֆը բաւական կոտորած կընէ:

Բողոքականաց ամերիկայի միսիոնարներ՝ Մանդակունեանց տուն վարձելով՝ հիւանդանոցի վերածեցին, յատկանպէս գաղթական հիւանդներ խնամելու նպատակաւ: Այդ միսիոնարաց կողմէ գործ, հաց և զգեստ կը չարունակին տուրիլ հաղարաւոր աղքատներու:

Այս տարվայ ցուրտն ալ անտանելի է, մինչև—23°, ինչ որ անսովոր է Վանի համար: Այս չարթուս այնչափ ձիւն տեղաց, որ փողոցներ չատ տեղ գրեթէ անանցանելի դարձեր են:

Երկրաշարժն ալ վերսկսեր է, երեկ և միւս օր. 24 ժամվայ ընթացքի մէջ՝ 10 անգամէն աւելի ցնցումներ զգացուեցան: Ամենէն բուռն այն էր, որ տեղի ունեցաւ յունվարի 22-ի երեկոյեան ժամ 1½-ի միջոցներ: Ագոր նման երկարատև և խիստ ցնցում տեսած չէինք մենք: Քանի մը տուներ փլած են. չատ տներ խարխլած, իսկ փլած պատեր չատ և չատ են:

Մ—դ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լօնդոնից հեռագրում են, որ անգլիական համայնքների ժողովի իրլանդական կուսակցութիւնը 38 ձայների մեծամասնութեամբ 21-ի դէմ իր ղեկավար ընտրեց Ջ. Դիլլօնին:

—«Times» լրագրի Սոֆիայի թղթակիցն ասում է, որ Մեծ-Բրիտանիայի և երեքպետեան դաշնակցութեան ներկայացուցիչները ներկայ չէին պրինց Բորիսի մկրտութեան հանդիսին:

—«Nordd. Allg. Zeitung» լրագիրը հաղորդում է, որ Մէրսինի գերմանական հիւպատոսին, անգլիական կառավարութեան ցանկութեան համեմատ, յանձնված է բրիտանական շահերի պաշտպանութիւնը Աղանայի վիլայէթում՝ Աղանայի բրիտանական փոխ-հիւպատոսի ժամանակաւոր բացակայութեան պատճառով:

—Կ. Պոլսից հեռագրում են, որ պետական պարտքերի վարչութեան կոմիսար Մուրադ-բէյին քրէական դատարանը մահվան պատժի դատապարտեց նրա բացակայութեամբ, և նրա կայքերը ևս յարքունիս գրաւեց:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 2-ին, Օդէսայում փորձ արին տելեֆոնի միջոցով լսել օպերային երգեցողութիւնը: Փորձը կատարելապէս աջողվեց: Տելեֆոնը դանվում էր թատրոնից երեք վերստ հեռու՝ Օդէսայի տեխնիկական ընկերութեան շինութեան մէջ: Պատրաստված էին 42 մեքենայ, որոնց մօտ տեղաւորվեցին լսողները: Թատրոնում ներկայացնում էին «Կարմէն» օպերան: Ոչ միայն օպերայի կատարումն էր լսվում գեղեցիկ կերպով, այլ օրկեստրի ձայնը և նոյն իսկ հասարակութեան ծափահարութիւնները և բացականչութիւնները: Տօրէպարտի երգը այնքան ոգեշնչեց լսողներին, որ նրանցից մի քանիսը մուրացմամբ իրանք էլ կանչեցին «բրավօ»:

* * *

Նանսէնի Հիւսիսային բևեռ հասնելու լուրը շարունակում է հետաքրքրել գիտական աշխարհը: Աշխարհագրական ընկերութեան վերջին նիստում նախագահ Սիմեոնով զեկուցեց այդ մասին հետևյալը: Նովօ-սիբիրսկի կղզիներում բարձր Տօլ պատրաստել է պաշար Նանսէնի համար, երբ նա վերադառնայ և այդ մասին իմաց է տուել Նանսէնին, նշանակելով քարտէզի վրա պաշար պատրաստված կէտերը: Նանսէնը այդ պատճառով հաւանական է, որ վերադառնայ Նովօ-սիբիրսկի կղզիներում: Որովհետև Կուշնարեւով վաճառականը գործակատարներ է ուղարկում այդ կղզիները մամուռի ոսկր ձեռք բերելու, ուստի նա կարող էր տեղեկութիւն ունենալ Նանսէնի կամ նրա ուղեկիցների մասին: Իրկուտսկի նահանգապետը հեռագրել է Կիրենսկ, որ այնտեղից էսքիմոներ ուղարկեն Եակուտսկ՝ ճիշտ տեղեկութիւններ ստանալու և եթէ հարկաւոր լինի՝ Նանսէին օգնելու:

* * *

Սուլթանը պրինց Ֆերդինանդին ընծայ ուղարկեց իր եօթերորդ և վերջին որդու՝ Մահմէդ-Բարխան-Եդդին-Էֆէնդիի պատկերը: Թէ ինչու հէնց այդ որդու պատկերն է ուղարկել սուլթանը,—յայտնի չէ, բայց, յամենայն դէպս, այդ ընծայով կամեցել է իր համակրութիւնը յայտնել պրինցին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՎԻԵՆՆԱ, 12 փետրվարի: Արքեպիսկոպոս Մելչիսի դիտաւորութիւն ունի արգելել կաթոլիկական ժամասացութիւնը Սոֆիայի պալատական կաթոլիկ եկեղեցում:

ԼՕՆԴՕՆ, 12 փետրվարի: Շոգենաւով Պլիմուտ հասաւ Ջէմսոն իր համախոհներով: Շոգենաւի վրա ոչ ոքին չեն թողնում: Ընդհանուր յուզմունք է տիրում: Ոստիկանութիւնը և զօրքը պահպանում են կարգը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 փետրվարի: Փետրվարի 13-ին Անիչկովեան պալատի եկեղեցում պատարագին ներկայ էին՝ Թագաւոր Կայսրը, Մարիա Ֆէոդորովնա և Ալէքսանդրա Ֆէոդորովնա Կայսրուհիները, Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչ, Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնա և Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ իր ամուսնու՝ Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնայի հետ:

ԼՕՆԴՕՆ, 13 փետրվարի: Ջէմսոնի զինուորների մի մասը, որոնք ափ էին իջել Պլիմուտ, երեկոյեան հասան Լօնդօն: Զը նայելով որ Իշխանութիւնները գաղտնի էին պահում գնացքի դալու ժամը, կայարանի առջև ժողովրդի անդալու բազմութիւն հաւաքվեց, որը զիմաւորեց զինուորներին կեցցէներով: Այն չոգենաւը, որի մէջ գտնվում են Ջէմսոնը և օֆիցէրները, սպասվում է վաղը:

ՎԻԵՆՆԱ, 14 փետրվարի: Պրագայում, վիրաբոյժ Մանդլ օպերացիայի ենթարկեց մի 19 տարեկան զինուորի, զուրս կորելով նրա մէջքից ուռոյցը, որը, ինչպէս երևաց, մի անդուրեկան օրգանիզմ էր, պատած ճարպով և մազերով: Քննելով՝ վիրաբոյժը գտաւ, որ այդ օրգանիզմը,—զինուորի երկրորդակի սաղմն է, որ արմատ է գցել նրա կազմուածքի մէջ: Բժշկութեան մէջ՝ դա առաջին օրինակն է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Փետրվարի 13-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	94 ր.	05 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 »	85 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	25 »
Ոսկի — — արժէ . .	7 »	50 »
Մաքսային կուպօնները — . .	149 »	— »
Բօրսային դիսկօնտ — . .	$7\frac{1}{2}$ »	— »
4% պետական բէնտա	98 »	— »
Երկրին 5% առաջին փոխառութ.	287 »	— »
— — երկրորդ —	260 »	—
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	218 »	50 »
5% պետական երկաթուղ. բէնտա.	100 »	50 »
4% Ներքին փոխառութեան . . .	$97\frac{7}{8}$ »	— »
$4\frac{1}{2}$% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	$100\frac{1}{8}$ »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ		
$4\frac{1}{2}$% վկայակ. գիւղ. հող. բանկի	$100\frac{1}{8}$ »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մնաց.	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիաները.	$101\frac{1}{2}$ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	$101\frac{3}{4}$ »	— »
Օդէսայի — —	100 »	50 »
Թիֆլիսի — —	$98\frac{3}{4}$ »	— »
Թիֆլիսի կալ. բանկի 6% — . .	100 »	50 »
5% — — — . .	99 »	— »
Ռուխայիսի — 6% . .	100 »	50 »
5% — — — . .	99 »	— »

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ԹԱՒՐԻԶ. «Արամեան» ընկերութեան. «Մշակ» ձեզ արդէն ուղարկվում է: Յաւում ենք, որ քիչ ուշացաւ:

ԹԻՖԼԻՍ. Հրատարակչական ընկերութեան. Մոսկվայից Ա. Մանուէլեանց ուղարկել է մեզ 12 ռուբլի, ձեզ հասցնելու համար: Բարեհաճեցէք ստանալ:

ԹԻՖԼԻՍ. «Տարազի» խմբագրութեան. Մոսկվայից մեզ ուղարկել են 34 ր. 80 կ., ձեր թերթի բաժանորդագին: Կարդաղրեցէք ստանալ:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԱՐԱՔՍ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Լոյս տեսաւ «ԿԻԼԻԿԻԱ» վերնագրով մեր հրատարակութիւնը 33 փոքրագիր նկարներով: Գինն է ճանապարհածախսով 1 ռուբլի 25 կ., ոսկեկազմով 2 ռուբլի:

«ԱՐԱՔՍ»-ի 1894—95 տարեշրջանի բաժանորդների համար անկազմը արժէ 40 կոպ., իսկ ոսկեկազմը՝ 1 ռուբլի: Անկազմ պահանջողները վճարելու են 14 կ. փոստի ծախս: Մեր ապահով հասցէն. С.-Петербургъ, Симеону Гуламирянцу.

«ԱՐԱՔՍ»-ի 1895 տարեշրջանի գրքերից մնում է 500 օրինակ. երկու գրքի բաժանորդագինն է ճանապարհածախսով 3 ռուբլի, ոսկեկազմով՝ 5 ռուբլի:

Վերադիր վճարով բաժանորդագրութիւն չենք ընդունում:

Դարձեալ կրկնում ենք, մինչև որ չուտով չը սպառվեն «Արաքս»-ի ներկայ տարեշրջանի գրքերը, մենք, մեր բուռն ցանկութեան հակառակ, միանգամայն անկարող ենք ընդունել 1896 տարեշրջանի բաժանորդագրութիւնը, ուստի մասնաւորապէս խնդրում ենք չաճապարել մեզ ուղարկելու 1896-ի բաժանորդագրութիւն:

Ծանօթութիւն. Բացի վաղօրօք բաժանորդագրումներից, «Արաքսը» լոյս տեսնելուց յետոյ տարածվել է ժողովրդապէս 800 օրինակ, սակայն մինչև այժմ, ի հաշիւ այդ 800 օրինակի, ստացել ենք ընդամենը միայն 705 ռուբլի, որից միայն 350 ռուբլի բոլոր օրինակների առաքման պօստի ծախսն է եղել: Այժմ հարցնում ենք շարունակ մեզ դիմող բազմաթիւ անձինքներից, թէ ինչպէս կարող ենք կանոնաւորապէս հրատարակել «Արաքս»-ը և ներկայ մեր ձախորդ պայմաններում էլ յանդուգն վստահութիւն ունենալ գեռ ևս չարունակել, մինչդեռ հանդիսի հրատարակութեան ծախսի համաձայն մուտք չէ գալիս, և այդ էլ, որ ամենակարևորն է, չէ գանձվում իր ժամանակին:

«ԱՐԱՔՍ»-ի երկրորդ գիրքը, որի լոյս տեսնելու ժամանակը այժմ դեռ ևս անկարող ենք ճշգրիտ նշանակել, տպագրութեան և դեղարուեստի կողմից լինելու է աւելի աջող:

«ԱՐԱՔՍ»-ը իր ներկայ դրութեամբ, որքան էլ արտաքին կողմից ընտիր մի հրատարակութիւն է համարվում նոյն իսկ եւրօպական լաւ հրատարակութիւնների շարքում, այնու ամենայնիւ մենք դրամով երբէք գոհ մնալ չենք կարող, ըստ որում մենք ունենք անհամեմատ աւելի գերազանց, և, միջոց ունենք անհամեմատ աւելի գերազանց, և, միջոց ունենք անհամեմատ աւելի գերազանց, և, մի ընթերցողին, մի խօսքով գեղարուեստական մի կատարեալ գործ: Սակայն այս բոլորը կախված է կանոնաւոր կանխիկ բաժանորդագրութիւնից:

1—1 Ս. Գուլամիրեանց

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների:

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուչաբթի, չորեքչաբթի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքչաբթի, հինգչաբթի և շաբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—5—6 ժ. երեքչ. հինգչ. և շաբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուչաբթի չորեքչաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մաշքի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խուշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիթի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԼՈՒՄԱՑ

ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ

ՎԷՊ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ

ԳԻՆՆ Է 60 ԿՕՊ.

Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Типографія Главноначальствующаго, Сергѣю Назарьянцу. ԹԻՖԼԻՍՈՒՄ վաճառվում է նաև Կենտրօնական և Կովկասեան գրավաճառանոցներում: ԲԱԳՈՒՄ ծախվում է Շիրազեանցի գրախանութում:

(№ 64) 2—5

Մամուլի տակից դուրս եկաւ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ-ՈՒԽՏԻ

(չարունակութիւն և վերջ. հատոր գ.)

«ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ»

ՍԱՀԱԿ ԳԷ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

(№ 16) 3—5

Ներկայ փետրվարի 5-ից բացվում է

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ

ՁՐԻ ԴԱՍԸՆԹԱՑ

Զքաւոր աղջիկների համար

(Կրուզենշտերնսկայա փողոց, № 7)

Սոֆիա Իսահակեան ԴԷՄԵՆՏԻԵՎԱ

(№ 15) 4—5

«ԵԱՍԼԻ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Ընդունվում են սաբ-վարակիչ հիւանդութիւններով (կարմրուկով, ծաղիկով, քութէչով, դիֆտէրիտով) հիւանդացած երեխաներ: Ծծկեր երեխաները կարող են ընդունվել իրանց մայրերի կամ դայակների հետ: Ընդունելութիւնը ամեն օր: Բժշկութիւնը և խնամատարութիւնը ձրի է: Հասցէն Վէրա, Ծղնէսակի փողոց, տուն խալեապին: (№ 9) 5—10

Զգուշացրէք կեղծուածներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ

Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեղինները, սեսթիլը, դեղին բծերը, պուդիկները և պատվները և ներգործում է աւելորդ քրտնելու դէմ: Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան:

ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թ-ի համար:

Կտորի գինը 50 կ., $1/2$ կտորի 30 կ.:

Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործական մագազիններում և դեղատներում:

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իրգէնսի մօտ Մոսկվայում: Դէպոյ, Թիֆլիսում Ագմուրովի մօտ, դեղագործական ապրանքների առևտրի Կովկասեան ընկերութեան մէջ, Ծուրինովի և Գրիվնակի, պ.պ. Պոպովների և Արիստակովի մօտ:

(№ 7) (ա. 1 և 15) 7—24

ԹԻՖԼԻԶԻ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԸ ԵՒ ԹԻՖԼԻԶԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԸ

սրանով պատիւ ունեն յայտնելու ի գիտութիւն հանրութեան, որ ըստ իրանց փոխադարձ համաձայնութեան, ներկայ տարվայ մարտի 1-ից սկսած՝ յիշեալ Առևտրական բանկի Բագուի, Երևանի և Բաթումի բաժիններում տեղի կունենայ ընդունելութիւն ՊԱՅՄԱՆԱԺԱՄՈՎ ՈՐՈՇՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ, որոնք հասնելու են կալուածական բանկին նրա տեղացի պարտապանների:

(№ 19) 1—3

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ օգտին, իրանց ածնի առթիւ, սոյն ուսումնական տարեշրջանում կատարվին նուիրեցին՝

Գերապատիւ Անանիա եպիսկոպոս 25 ր., պ.պ. բժ. Ալէքսանդր Սարգսեանց 25 ր., Հայրապետ Խաչատրեանց 6 ր., Խաչատուր Բուսնեաթեանց 5 ր., Մատթէոս Ափրիկեանց, Ալէքսանդր Քուչարեանց, Ալէքսանդր Մալաքեանց, Հայրապետ Յակոբեանց և Յոհան Բատիկեանց 4-ական ր., Աւետիս Փոստոյեանց, Աւետիս Բաղդասարեանց, Խաչատուր Գորոյեանց, Կարապետ Ղլղուղեանց, Կարապետ Տէր-Իսահակեանց, Մկրտիչ Սանամեանց, Մկրտիչ Դայեանց և Յովհաննէս Արեչատեանց 3-ական ր., Կարապետ Աւետիսեանց 2 ր. և Ալէքսանդր Պետրոսեանց 1 ր. ընդամենը 180 ր.:

Հոգաբարձութիւնս պարտք է համարում հրապարակապէս յայտնել իր խորին շնորհակալութիւնը յիշեալ անձանց, որոնք՝ չը նայելով մի քանի չարակամ բախտախնդիրների յարուցած խոչընդոտներին՝ չը խնայեցին իրանց նուէրները, որոնց շնորհիւ բաղմաթիւ չքաւոր երկու սեռի մանուկներ միջոց պիտի ունենան մանկակից լինելու կրթութեան մատուցած բարիքներին և երախտապարտ սրտով միշտ պիտի օրհնեն նուիրատուների կեանքը:

Անդամ հոգաբարձութեան՝ Ս. Բատիկեանց
Քարտուղար՝ Գ. Բատիկեանց

1—1

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Լուսանկար Տէր-Գևոնդեանի մօտ վաճառվում են հետևեալ հայ գործիչների պատկերները՝

Հոգևորականներ.—հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ և ՄԵՍՐՈՊԻ: Ժամանակակիցներից՝ ՆԵՐՍԷՍ V, ԳԷՈՐԳ IV, ՄԱԿԱՐ և ՄԿՐՏԻՉ կաթողիկոսների, ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷՔՍԷՅԵԱՆԻ (կաթողիկոս Կիլիկիայի), ՄԱՏԹԷՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ, ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ և ուրիշ արժանաւոր հոգևորականների:

Նոյն տեղը վաճառվում են.—ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ՐԱՖՖԻ, ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ, ԾԵՐԵՆՑԻ, ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ, Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Գ. ԱԴԱՄԵԱՆԻ (բոլոր դերերում նկարված), ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ, կենդանի ԳՐՈՂՆԵՐԻ, նշանաւոր հայ ԿԱՆԱՆՑ՝ Ս. ՏԻՍԱՐԻ, ՄԱՐԻԱՄ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐԾՐՈՒՆՈՒ, «ՄՇԱԿԻ» ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ յօբելեանական ալբոմը, նմանապէս ուրիշ զանազան գործիչների լուսանկարները:

Վերոյիշեալ պատկերները արժեն՝ մեծագիր 3 ռուբլի, ՄԻԶԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 ռուբլի, ԿԱԲԻՆԵՏԱՅԻՆ կոչված պատկերները՝ 40 կոպէկ, ՎԻԶԻՏ կոչված պատկերները՝ 20 կոպէկ:

Հասցէն՝ ТИФЛИСЪ. Фотографія Теръ-Гевондянца (На Михайловск. мосту). Ճանապարհածախսը գնողի վրա է:

(№ 117) 1—10

Дозволено цензурою, Тифлисъ, 14 Февраля 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. кав.